Շեն ԲՀԿ հետ համագործակցող կոոպերատիվների գործունեության վերլուծություն

Հարցումների նպատակը

- Հավաքագրել ինֆորմացիա կոոպերատիվների գործունեության վերաբերյալ
- Դուրս բերել համակարգման, վերահսկման ու ռազմավարական խնդիրները
- Առաջարկել կոոպերատիվների զարգացման և գործունեության դիվերսիֆիկացման ուղիներ

Ընդհանուր առմամբ հարցմանը մասնակցել են 6 մարզերի 10 կոոպերատիվներ՝

	Մարզ	**Բնակավայր**	**Կոոպերատիվի անվանումը**	**Կոոպերատիվի գործունեության ոլորտը**
1.	Շիրակ մարզ	Մեղրաշատ բնակավայր	«Հյուսիսի պանիր» Գ/Կ	• Չեչիլ պանիրի և կարագի արտադրություն
2.	Շիրակ մարզ	Մեղրաշեն բնակավայր	Մեղրաշենի գյուղատնտեսական Ս/Կ	• Սերմերի զտում, ախտահանում, տեղափոխում
3.	Լոռու մարզ	Վահագնի բնակավայր	ՎՄՕՍՔ Գ/Կ	• Վարի ծառայություն, • Ցանքի ծառայություն, • Կարտոֆիլի մշակության ծառայություն,

				• Խոտհունձ և հակավորում
4.	Տավուշի մարզ	Բերդավան բնակավայր	«Բերդավան» պտղաբուծական Ս/Կ	• Հողի նախացանքային աշխատանքների իրականացում՝ վարի (վարելահողերի և բազմամյա տնկարկների միջշարային տարածությունների), • Հողաֆռեզի ծառայություն, • Կուլտիվացիայի ծառայություն
5.	Վայոց ձորի մարզ	Աղնջաձոր բնակավայր	Վարդենյանց կաթ արտադրողների Ս/Կ	• Կաթի մթերում, վերամշակում և վաճառք
6.	Գեղարքունիքի մարզ	Գեղամասար բնակավայր	Գեղամասար համայնքի գյուղմթերք արտադրողների Ս/Կ	• Մոտոբլոկով վար, • Կթի ագրեգատի վարձակալություն, • Ձեռքի խոտհնձիչով խոտհունձ, • Ջերմատնային տնտեսություն
7.	Գեղարքունիքի մարզ	Լանջաղբյուր բնակավայր	«Վան» հողագործական Ս/Կ	• Վարի ծառայություն, • Ցանքի

				ծառայություն, • Սրսկման ծառայություն
				•
8.	Գեղարքունիքի մարզ	Փոքր Մասրիկ բնակավայր	«Փոքր Մասրիկ» Ագրո Ս/Կ	• Վարի ծառայություն, • Ցանքի ծառայություն, • Կարտոֆիլի մշակության ծառայություն
9.	Գեղարքունիքի մարզ	Արեգունի բնակավայր	Արեգունի համայնքի հողագործական և անասնապահական Ս/Կ	• Արտադրանքի վաճառք, • Վարի ծառայություն, • Չորանոցային տնտեսության վարձակալություն, • կթի ագրեգատների վարձակալություն
10.	Սյունիքի մարզ	Շաղատ	Շաղատ համայնքի արոտօգտագործողների Ս/Կ	• Խոտհունձի և հակավորման աշխատանքներ, • Կոմբայնով հունձի և բերքի տեղափոխում, • Չորանոցային տնտեսությունների վարձակալություն,

				• Սերմերի քամհարման, զտման և ախտահանում, • Կտավատից ձեթի մամլման ծառայություն, • Ձավարաղացի ծառայության մատուցում, • Սառնարանային տնտեսությունում մրգի պահպանություն

Հարցմանը մասնակցած կոոպերատիվներից 8-ը սպառողական են, իսկ 2-ը՝ գյուղատնտեսական: Կոոպերատիվները հիմնվել են տարբեր տարիների ընթացքում և իրենց բնույթով՝ գործունեությամբ տարբեր են՝

1. **Ծառայություններ մատուցող կոոպերատիվներ՝**
    - հողի նախացանքային աշխատանքների իրականացում՝ վարի (վարելահողերի և բազմամյա տնկարկների միջշարային տարածությունների), հողաֆռեզի, կուլտիվացիայի,
    - տարբեր տեսակի մշակաբույսերի ցանք,
    - սրսկման աշխատանքներ,
    - պարարտանյութի ցրման աշխատանքներ,
    - արքաղի հավաքման և հեռացման աշխատանքներ,
    - խոտհունձի և հակավորման աշխատանքներ,
    - կոմբայնով հունձի և բերքի տեղափոխում,
    - կարտոֆիլի մշակությանը աջակցող ծառայություններ
    - կթի ագրեգատների վարձակալություն,

- չորանոցային տնտեսությունների վարձակալություն,
- սերմերի քամհարման, զտման և ախտահանում,
- կտավատից ձեթի մամլման ծառայություն,
- ձավարաղացի ծառայության մատուցում,
- սառնարանային տնտեսության վարձակալություն մատուցող կոոպերատիվներ

2. **Արտադրական կոոպերատիվներ՝**
   - անասնակերի արտադրություն,
   - կաթի մթերման, վերամշակման և վաճառք իրականացնող կոոպերատիվներ:

Կոոպերատիվների հիմնադրման տարեթվերը

Աղյուսակից երևում է, որ թիրախային կոոպերատիվներից 3 –ը 8-9 տարեկան են, 2-ը՝ 5 տարեկան, 5 կոոպերատիվ՝ 3-1 տարեկան: ԱՄՔՈՐ-ի կողմից մեկ կոոպերատիվ՝ ՎՄՕՔՍ-Գ/Կ, USAID-ի կողմից՝ Վարդենյանց կաթ արտադրողների Ս/Կ-ն, CARMAC ծրագրի շրջանակում՝ Շաղատ համայնքի արոտօգտագործողների Ս/Կ, իսկ մնացած կոոպերատիվները հիմնադրվել են Շեն ԲՀԿ-ի կողմից տարբեր միջազգային ծրագրերի շրջանակում:

Կոոպերատիվի անդամների թիվը





Ամենաշատ անդամներ հիմնադրման ժամանակ, ինչպես նաև ներկայում ունի Շաղատ համայնքի արոտօգտագործողների Ս/Կ-ը 71 անդամ հիմնման և ներկայում 52 անդամ, որը դոնորի (CARMAC ծրագրի) պահանջներից է բխել, իսկ մինիմալ անդամների քանակն ունի «ՎՄՕՔՍ» Գ/Կ-ը՝ 5 անդամ:

Ամենամեծ անդամների թվաքանակի նվազում կոոպերատիվի հիմնադրումից հետո /Կոոպերոտիվի հիմնադրումից հետո անդամների թվաքանակի ամենամեծ նվազումը/ տեղի է ունեցել Բերդավան պտղաբուծական Ս/Կ և Շաղատ համայնքի արոտ օգտագործողների Ս/Կ-ներում, իսկ անդամների քանակի ավելացում՝ Վարդենյանց կաթ արտադրողների Ս/Կ-ում: Վերջինիս պարագայում կաթի մթերման ծավալների պահանջարկից ելնելով նոր անդամներ են ներգրավվել: Պետք է նշել նաև, որ այս երեք կոոպերատիվները հիմնվել են 2013-2015թթ, միգուցե մյուս կոոպերատիվներն իրենց գործունեության ընթացքում նույնպես կունենա/ն/ թե՛ անդամների թվաքանակի նվազում և թե՛ ավելացում:



Կոոպերատիվի վարչության անդամների թիվը, որոնցից կանայք



Վերլուծությունը ցույց է տալիս, որ կանայք ներգրավված են 10 կոոպերատիվներից 6-ի վարչություններում: 3 կոոպերատիվներում անդամների կազմում առկա են կանայք, սակայն ներգրավված չեն վարչության կազմում՝ Բերդավան պտղաբուծական Ս/Կ, Գեղամասար համայնքի գյուղմթերք արտադրողների Ս/Կ և Արեգունի համայնքի հողագործական և անասնապահական Ս/Կ-ում, իսկ մեկ կոոպերատիվում կանանց ներգրավվածությունը բացակայում է՝ կոոպերատիվում միայն 5 տղամարդ է(«ՎՄՕՔՍ» Գ/Կ):

Փոփոխություններ կոոպերատիվի նախագահի կամ վարչության անդամների – 10 կոոպերատիվներից 4-ում տեղի է ունեցել փոփոխություն:

- Բերդավան պտղաբուծական Ս/Կ-ում – կոոպերատիվի անդամակցությունից հրաժարման պատճառով,
- Շաղատ Արոտօգ. Ս/Կ- ում կոոպերատիվի նախագահը մեկնել է ՌԴ, ինչպես նաև վարչության անդամներից մահացել են,

- Գեղամասար համայնքի գյուղմթերք արտադրողների Ս/Կ-ում - կոոպերատիվի նախագահի աշխատանքային ծանրաբեռնվածություն
- Վարդենյանց կաթ արտադրողների Ս/Կ-ում - վարչության անդամների փոփոխություն պասիվ աշխատելու պատճառով:

Սա ժողովրդավարության կարևոր ցուցիչ է:

Ընդհանուր ժողովների թիվը տարեկան կտրվածքով - 10-ից 8 կոոպերատիվներում տեղի է ունեցել ընդհանուր ժողով՝ միջինում 2 անգամ, Բերդավան և Գեղամասար կոոպերատիվում 2022թ. ընդհանուր ժողով չի եղել:

Վարչության նիստերի թիվը տարեկան կտրվածքով - կրկին 10-ից միայն 8 կոոպերատիվներում է տեղի ունեցել նիստ տարեկան միջինում 2 անգամ:

Վճարովի աշխատակիցների ընտրության չափանիշները - միայն 3 կոոպերատիվներ են պատասխանել՝ Գեղամասար համայնքի գյուղմթերք արտադրողների Ս/Կ-ում նշել են, որ ընտրում ենք համաձայն դիմումի, Փոքր Մասրիկ Ագրո Ս/Կ-ում՝ վճարովի աշխատողներին ընտրում են ըստ իրենց մասնագիտական հմտությունների և մատուցած ծառայությունների՝ պահանջած գումարին համապատասխան, Մեղրաշենի գյուղատնտեսական Ս/Կ-ում՝ հաշվի է առնվում աշխատանքային փորձը:

Կոոպերատիվի նախագահի և հաշվապահների ընտրության և աշխատավարձների մասին որոշումների արձանագրությունների առկայության մասին - 7 կոոպերատիվ են ներկայացրել աշխատավարձերի մասին որոշումներ և միայն մեկ կոոպերատիվում է, որ նախագահը աշխատում է կամավորության հիմունքներով՝ Մեղրաշենի գյուղատնտեսական Ս/Կ-ում /ո՞րն է Մեղրաշենի նախագահի վերաբերյալ ասվածի հիմքը/:

Կոոպերատիվի հիմնական միջոցները՝ շենք, շինություն, սարքեր, սարքավորումներ (օրինակ՝ կաթի սառնարան, սեղան, փաթեթավորման սարք, գյուղ տեխնիկա, գյուղ. սարքավորում և այլն) – Ամենամեծ օժանդակությունը ստացել է Շաղատ համայնքի արոտօգտագործողների Ս/Կ-ը, որը այս տարիների ընթացքում համագործակցել է տարբեր դոնորների հետ և ստացել է թիրախային օժանդակություններ:

Որքա՞ն խնայողություններ կամ հավելյալ եկամուտ են ունենում կոոպերատիվի անդամները՝ Բոլոր կոոպերատիվներ կարողացել են հիմնավորումներով ներկայացնել



անդամների և ոչ անդամների օգուտները:

Ծառայության անվանումը	**Կոոպերատիվի անդամներին համար**	**Կոոպերատիվի ոչ անդամներին համար**	**Կոոպերատիվի անդամների խնայողությունները ծառայությունների մատուցումից**
Վարի ծառայություն	20000 դր/հա	25000 դր/հա	5000 դր
Վարի ծառայություն դիզ վառելիք տրամադրմամբ	6000 դր/հա	8000 դր/հա	2000 դր
Ցանք	10000 դր/հա	25000 դր/հա	15000 դր

Կարտոֆիլի մշակություն	100000 դր/հա	140000/հա	40000 դր
Հողաֆրեզ	10000 դր/հա	15000 դր/հա	5000 դր
Միջշարային վար	25000 դր/հա	30000 դր/հա	5000 դր
Կուլտիվացիա	13500 դր/հա	16000 դր/հա	2500 դր
Սրսկում	13500 դր/հա	16000 դր/հա	2500 դր
Մոտոբլոկով վար	52000 դր/հա	57000 դր/հա	5000 դր
Կթի ագրեգատների վարձակալություն	9500 դր/1սարք	10000 դր/1սարք	500 դր
Ձեռքի խոտհնձիչով խոտհունձ	69750 դր/հա	74750/հա	5000 դր
Խոտհունձ	5000 դր/հա	6000 դր/հա	1000 դր
Հակավորում	120 դր/ 1 հակ	150 դր/ 1 հակ	30 դր/1 հակ
Չորանոցի ծառայություն	10 կգ/անվճար	10 կգ/ 300դր	
Արքաղի հավաքման ծառայություն	13500 դր/հա	16000 դր/հա	2500 դր
Հատիկի քամհարման ծառայություն	2000 դր/1տ	2500 դր/1տ	500 դր
Հատիկի զտում	3000 դր/1տ	3500 դր/1տ	500 դր
Հատիկի ախտահանում	3000 դր/1տ	3500 դր/1տ	500 դր
Կերաղացի ծառայություն	4000 դր/1տ	4500 դր/1տ	500 դր

Որքա՞ն ֆերմերային տնտեսություններ են օգտվում կոոպերատիվի ծառայություններից

Շաղատ համայնքի արոտօգտագործողների Ս/Կ-ի և Բերդավան պտղաբուծական Ս/Կ-ի կողմից տրամադրված ծառաթյուններից օգտվում են ամենամեծ թվով *կոոպերատիվների անդամները*:

Պետք է նշել նաև, որ ամենամեծ թվով ծառայությունները առաջակում է Շաղատ համայնքի արոտօգտագործողների Ս/Կ-ն, իսկ *ոչ անդամներից* ամենաշատը օգտվում են Վան հողագործական Ս/Կ-ի կողմից տրամադրված ծառայություններից:

Արեգունի համայնքի հողագործական և անասնապահական Ս/Կ ամենամեծ թվով



մթերումներն է իրականացնում՝ 50 կոոպերատիվի ոչ անդամներից:

Որտեղի՞ց է ձևավորվում կոոպերատիվի շահույթը – հարցին **Ապրանքների վաճառքից** նշել է 2

կոոպերատիվ՝ «Հյուսիսի պանիր» Գ/Կ և Վարդենյանց կաթ արտադրողների Ս/Կ-ները, **Ծառայության/ների մատուցումից** նշել է 3 կոոպերատիվ՝ Բերդավան պտղաբուծական Ս/Կ, Վան հողագործական Ս/Կ և Մեղրաշենի գյուղատնտեսական Ս/Կ, իսկ **Երկուսը միասին** նշել են 5 կոոպերատիվ՝ «ՎՄՕՔՍ» Գ/Կ, Գեղամասար համայնքի գյուղմթերք արտադրողների Ս/Կ, Արեգունի համայնքի հողագործական և անասնապահական Ս/Կ, Փոքր Մասրիկ Ագրո Ս/Կ և Շաղատ համայնքի արոտօգտագործողների Ս/Կ-ները:

Արդյո՞ք կոոպերատիվը օգտվել է վարկային կամ լիզինգային ծրագրերից



Երեք կոոպերատիվներ օգտվել են վարկային կամ լիզինգային ծրագրերից՝

- Հակավորման սարքավորման ձեռքբերումից օգտվել է «ՎՄՕՔՍ» Գ/Կ-ը լիզինգով՝ 3 տարի ժամկետով 2,500,000 դրամի չափով,
- «Հյուսիսի պանիր» Գ/Կ-ը օգտվել է արևային ֆոտովոլտային համակարգի տեղադրումից 3 տարի ժամկետով 2,500,000 դրամի չափով,
- Սերմերի, դիզ. վառելիքի, պարարտանյութի ձեռքբերումից օգտվել է Շաղատ համայնքի արոտօգտագործողների Ս/Կ-ը 2 տարի ժամկետով 1,000,000 դրամի չափով:

Եզրակացություններ

1. Վերլուծությունների արդյունքում պարզ դարձավ, որ կոոպերատիվներից ոչ մեկը չի համապատասխանում կոոպերատիվի բոլոր յոթ սկզբունքներին, առանձին պարագայում նկատում ենք ժողովրդավարության, տնտեսական մասնակցության և եկամուտներ գեներացնելու երևույթներ, սակայն կան բազմաթիվ անելիքներ այս ուղղությամբ:
2. Այն կոոպերատիվներում, որտեղ անդամների մեջ կան կանայք, նրանց ներգրավվածությունը վարչության կազմում դրական է ազդում ընդհանուր համակարգման աշխատանքների վրա:
3. Հարցվածներից միայն մեկ կոոպերատիվի կողմից նշվել է, որ նոր անդամների անդամակցությունը կուժեղացնի իրենց գործունեությունը: Մնացածը հետաքրքրված չեն կոոպերատիվի անդամների թվի մեծացմամբ:
4. **Թերի կամ միանձնյա կառավարում:** Կառավարման տեսանկյունից կոոպերատիվները ունեն անդամների կողմից համակարգման խնդիր: Իրենց գործունեության փաստաթղթավորումը իրականացնում են իրավիճակից ելնելով, կամ հայցվող պահանջների համապատասխան: Կանոնավոր փաստաթղթային հաշվետվությունների, իրականացված աշխատանքի վերլուծություն չի իրականացվում: Սրանով է պայմանավորված նաև վարչության և ընդհանուր ժողովների անկանոն իրականացումը, քանի որ չունեն պատրաստի հաշվետվության նյութ: Նման գործելաոճն անուղղակի բերում է մյուս անդամների կողմից ընդհանուր գործառույթներին մասնակցության պակասին կամ բացակայությունը: Դեռևս ցածր է գիտակցությունը, որ կոոպերատիվի գերագույն մարմինը դա ընդհանուր ժողովն է, այլ ոչ թե նախագահը:
5. **Աշխատանքների չկանոնակարգված բաշխում:** Այն կոոպերատիվներն, որոնց անդամների թիվը մեծ է, արձանագրվում է աշխատանքների անկանոն բաշխում և սակավաթիվ անդամների ներգրավվում: Նման համակարգման մեխանիզմն անվստահություն է ձևավորում կոոպերատիվի մյուս անդամների մեջ:
6. Հարցված կոոպերատիվներից միայն մեկ կոոպերատիվն է իր ֆինանսական կառավարումն իրականացնում է հաշվապահական գրասենյակի միջոցով, իսկ մնացածը փորձում են ինքնուրույն համակարգել, որը ժամանակի ընթացքում խնդրահարույց հարցեր է առաջ բերում

7. **Հմտությունների պակաս:** Կոոպերատիվների մեծամասնությունը նշել է ֆինանսական կառույցներին դիմելու հմտությունների, բիզնես պլանների կազմման, կոոպերատիվների գործավարության, հաշվապահության, վաճառքի և մարքեթինգի գիտելիքների, նոր ծրագրերին և դոնոր կառույցներին դիմելու կարողությունների պակասի մասին:
8. **Ուժեղ կողմեր:** Հարցվածների մեծամասնությունը նշել է, որ իրենց ուժեղ կողմերից են խնդիրները լուծելու կարողությունը, համախմբվածությունը և միասնական աշխատանքը, բարձրորակ ապրանքի արտադրումը, անդամների լիարժեք մասնակցությունը:
9. **Թույլ կողմերից** նշել են ֆինանսական միջոցների անբավարարությունը, կայուն գնային քաղաքականության բացակայությունը, ունեցած տեխնիկայի հնությունը, գովազդի վատ կազմակերպումը, որակյալ մասնագետների և անհրաժեշտ սարքավորումների պակասը:
10. **Հեռանկարային զարգացում:**
    - **Կարճաժամկետ կտրվածքով** նշել են, որ ցանկանում են մեծացնել արտադրանքի ծավալները, դուրս գալ մեծ շուկա/ներ, ձեռք բերել նոր տեխնիկա, սարքավորումներ և սերմեր, կիրառել գյուղատնտեսության ժամանակակից միջոցներ, նոր ֆերմերային տնտեսությունների և կոոպերատիվների նոր անդամների ներգրավվումը:

      Նշել են արտադրանքի ծավալների ընդլայնման, մեծ շուկա/ներ դուրս գալու անհրաժեշտության մասին, ինչին հնարավոր կլինի հասնել նոր տեխնիկայի, սարքավորումների առկայության, գյուղատնտեսական ժամանակակից միջոցների ու բարձրորակ սերմերի կիրառության և նոր ֆերմերային տնտեսությունների ու կոոպերատիվների նոր անդամների ներգրավման միջոցով:
    - **Երկարաժամկետ կտրվածքով՝** նշել են հետևյալ աշխատանքները կատարելու հրամայականը նոր շուկաների պահանջարկի ուսումնասիրում, նոր մշակաբույսերի ընտրություն, նոր արտադրատեսակների և արտադրամասերի հիմնում, մրցունակ ապրանքների ստեղծում:
11. Ընդհանուր դրական միտում կա կոոպերատիվների կողմից վարկային փաթեթներից օգտվելու հարցում, որը խոսում է նրա մասին, որ կոոպերատիվները կարողանում

են ապահովել իրենց ներդրման մասը կամ գրավի առարկան: Այս մասով հարկավոր է կայացած փորձի օրինակը ներկայացնել մյուս կոոպերատիվներին:

12. **Գիտելիքի պակաս:** /Տեսանելի է/ Բիզնես պլանների կազմման, վաճառքի և մարկետինգի, նոր ծրագրերին ու ֆինանսական կառույցներին դիմելու կարողությունների ու հմտությունների պակաս:

Առաջարկություններ

1. Գործող և նոր ձևավորվող կոոպերատիվներին /առաջարկել իրենց/ գործունեությունները դիվերսիֆիկացնել ՝ վերանայելով կոոպերատիվների կանոնադրությունները: Ուղղորդել գործող կոոպերատիվներին դուրս գալ այն կարծրատիպերից և պարտադրված գործունեության ոլորտից, որ ժամանակին թելադրվել է դոնոր կամ այլ կառույցների կողմից: Աջակցել կանոնադրական փոփոխությունների իրականացման, նոր ռազմավարական ծրագրերի կազմման հարցերում:Մտածել մեխանիզմներ ծառայություններից չօգտվող և պասիվ անդամներից կոոպերատիվի թեթևացման մասին, որը հնարավորություն կտա նոր մոտեցումով կառավարել կոոպերատիվը, ինչպես նաև նոր համախոհ անդամներ ունենալ:
2. /Կատարել/ Կոոպերատիվի կանոնադրության փոփոխություն՝ նախաձեռնություն, որը կապահովի կանանց պարտադիր մասնակցությունը կոոպերատիվի և վարչության կազմում: Նման փոփոխությունը միայն դրական ազդեցություն կթողնի կոոպերատիվի կառավարման աշխատանքների համակարգման գործում:
3. Կոոպերատիվի նախագահների կողմից միանձնյա կառավարման կանխման համար առաջարկվում է մի քանի գործիքակազմի կիրառություն՝
    - Կանոնադրական փոփոխություններով ամրագրել, որ նույն անձը կոոպերատիվի նախագահի պաշտոնը չի կարող զբաղեցնել երկու ժամկետից ավել:
    - Կոոպերատիվի նախագահի գործառույթները պետք է լինեն միայն վերահսկող և կառավարող ֆունկցիաներ, իսկ անմիջական արտադրական/ծառայությունների մատուցման գործընթացը պետք է իրականացվի վարչության կողմից ընտրված կոոպերատիվի մյուս անդամների կողմից:

- Վարչության որոշմամբ յուրաքանչյուր տարի տարեկան հաշվետվությունը հրապարակել համայնքում՝ հստակ ներկայացնելով կոոպերատիվի անդամակցությունից ստացված օգուտները:

4. Պարտադիր պահանջ դնել՝ /ո՞վ է դնելու այդ պահանջը և ով է կազմելու այդ ծրագիրը/ կոոպերատիվների համար կազմել տարեկան ռազմավարական ծրագիր, որն ամեն տարի կներկայացվի տարեկան ժողովում:
5. Կոոպերատիվի գույքի պարտադիր գույքագրում և հաշվառում կոոպերատիվի հաշվապահական հաշվեկշռի մեջ: Այս գույքագրումը հնարավորություն կտա հասկանալու, թե որքան կապիտալ միջոցներ ունեն ֆինանսական կառույցների հետ համագործակցելու և պետության կողմից սուբսիդավորվող վարկային միջոցներից օգտվելու համար:
6. Կոոպերատիվի ֆինասական միջոցները համալրելու համար, ընդհանուր ժողովի որոշմամբ պարտադիր գործառույթ սահմանել՝ յուրաքանչյուր տարի նվազագույնը 10,000դր չափով լրացուցիչ փայավճարների տեսքով մուտքեր ապահովելը: Բացի հավելյալ միջոցներից նման գործառույթը ավելի պահանջատեր կդարձնի կոոպերատիվի մյուս անդամներին կառույցի կառավարման և գործունեության զարգացման մեջ:
7. Հնարավորության դեպքում կոոպերատիվների վերահսկողությունը իրականացնել այցերի միջոցով, տարվա մեջ երկու անգամ՝ վաղ գարնանը գյուղատնտեսական աշխատանքները սկսելուց առաջ և ուշ աշնանը՝ արդյունքների ամփոփումից հետո: Այցերի միջոցով հնարավոր կլինի նաև պատկերացում կազմել այդ ժամանակահատվածում կոոպետատիվի առաջընթացի վերաբերյալ/:
8. Կազմակերպել դասընթացներ կոոպերատիվների համար՝ բիզնես պլանների կազմման, հաշվապահության, վաճառքի և մարքեթինգի, նոր ծրագրերին դիմելու և գովազդների պատրաստման և օնլայն հարթակների միջոցով վաճառքի իրականացման:

   Կոոպերատիվների համար կազմակերպել բիզնես պլանների կազմման, հաշվապահության, վաճառքի և մարքեթինգի, նոր ծրագրերին դիմելու և գովազդների պատրաստման ու օնլայն հարթակների միջոցով վաճառքի իրականացման դասընթացներ:
9. Կոոպերատիվների կողմից ներկայացուցիչներ ընտրել, կազմել աշխատանքային խումբ և սկսել քննարկումներ կառավարության հետ կոոպերատիվների

զարգացման հարցերի շուրջ: Իրականացնել շահերի պաշտպանության, հարկային, ֆինանսավորման, պետական աջակցության վերաբերյալ քննարկումներ հատկապես ՀՀ էկոնոմիկայի նախարարության հետ: Համակարգային հարցերին լուծումներ չտալու դեպքում, կլինեն լոկալ հաջողություններ:

10. Կարելի է կազմակերպել կոոպերատիվների միություն և նրա միջոցով իրացնել արտադրանքը ավելի մեծ շուկաներում